

Ամոնիակային սելիտրա



Ամոնիակային սելիտրան (NH_4NO_3) ամենատարածված ազոտական պարարտանյութն է, պարունակում է 34.4% ազոտ: Արտադրվում է սպիտակ բյուրեղների կամ հատիկների տեսքով: Չեշտությամբ ջրում լուծվում է: Խիստ հիգրոսկոպիկ է, պահպանման ժամանակ կլանում է օդի խոնավությունը և պնդանում: Ներկայումս արտադրվում է գրանուլացված սելիտրա, որը չի պնդանում և երկար ժամանակ պահպանում է սորունությունը:

Ամոնիակային սելիտրան ազոտական պարարտանյութերի շարքում իր արդյունավետությամբ առաջին տեղում է: Այն մեծ հաջողությամբ կարելի է օգտագործել տարբեր մշակաբույսերի տակ բոլոր հողերում:

Ազոտի կիսով չափի դյուրաշարժ նիտրատային ձևի և կիսով չափ քիչ շարժուն ամոնյակային ձևի առկայությամբ ամոնիակային սելիտրան շահեկանորեն տարբերվում է այլ ազոտական պարարտանյութերից, թույլատրելով լայն տարբերակել նրա օգտագործման եղանակները, նորմաներն ու ժամկետները, կախված հողի հատկություններից, կլիմայից և պարարտացվող մշակաբույսից: Այն օգտագործում են ինչպես հիմնական և ցանքակից պարարտացման, նույնպես և վեգետացիայի ընթացքում՝ սնուցման ձևով:

Ի շնորհիվ իր հատկությունների, ամոնիակային սելիտրան համարվում է հեշտ լուծվող պարարտանյութ, նրա ամոնիակային մասը կլանվում է հողի կողմից և ցուցաբերում է ավելի երկար ազդեցություն, քան նիտրատային մասը:

Պարարտանյութը նպատակահարմար է օգտագործել կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերի հետ համատեղ:

Խոնավ կլիմայական պայմաններում, հատկապես թեթև մեխանիկական կազմով հողերում, որտեղ հնարավոր է նիտրատային ազոտի լվացումը, առավել արդյունավետ է նրա օգտագործումը նախացանքային կուլտիվացիայի տակ: Խոնավությամբ քիչ ապահովված շրջաններում այն կարելի է օգտագործել նաև աշնանը: Ամոնիակային սելիտրան աշնանացան ցանքերի վաղ գարնանային սնուցման համար լավագույն ազոտական պարարտանյութերից մեկն է: Այն կարող է օգտագործվել և՛ շարահերկ, և քանջարանոցային մշակաբույսերի սնուցման համար միջշարքային տարածությունների մշակության ընթացքում՝ 10-15 սմ խորությամբ վարածածկելու պայմանով:

Երաշխավորվում է ամոնիակային սելիտրան օգտագործել 150-200 կգ/հա և ավելի նորմայով կախված մշակաբույսի մշակության տեխնոլոգիայից:

Ամոնիակային սելիտրայի հիմնական առավելություններն են.

- Կարգավորում է բույսերի վեգետատիվ զանգվածի աճը.
- Ավելացնում է սպիտակուցի և սոսնձանյութի պարունակությունը հատիկի մեջ.
- Բարձրացնում է բերքատվությունը: